Ուղեբերու գանազան են ու տեսակաւոր: Իւրաքանչիւրը ունի իր օրէնքներն ու պայմանները: Որոշ խաղերու կրնան մասնակցիլ այն անձերը, որոնք որոշ գումար ունին իրենց հետ կամ իրենց գրպանները: Այլ խաղեր կրնան խաղալ անոնք, որոնք ունին մասնակցութեան յատուկ փոխարէն: Այս բոլորին մէջ ուռլէթը ամէնէն քաղաղական խաղն է, որով կը տարուին բոլորը: Դարձող այդ սկաւառակը իրեն կը կապէ շատերու ճակատագիրն ու ապագան:

Սեղանի վրայ թուր - թուրի ու աթոռներ կ'ունակ - կ'ունակի եւ ոչ ոք գիտէ, թէ ինչո՞ւ հոն է եւ թէ ի՞նչ կ'ուզէ: Անորոշ է ներկան ապագային պէս եւ թուղթերը կը շրջագային, ուռլէթը կը դառնայ ու մարդիկ կը խաղան ու կը խաղան:

Դրամներն ու դրամատուներուն գումարները երբ վերջանան, անպայման գոյութիւն ունի այլ ընտրանք մը՝ պարտքը, որ անգիտակցաբար կը դիզուի ու կը դիզուի իր մէջ խեղդելով խաղացողը:

Հետաքրքրական երեւոյթ է այն, թէ հոն աշխատող պաշտօնեաները բնաւ չեն ուզեր փորձել այս խաղերէն որեւէ մէկը եւ չեն ուզեր մտնել այդ քառսին մէջ, որովհետեւ անոնք ականատես կ'ըլլան կուրորէն խաղացողներուն վիճակին եւ անոնց կացութեան:

Անսահման ու անարժանի աշխարհ մըն է քաղինոյի աշխարհը, ուր մուտք գործողը անպայման կը կորսուի տեղ մը ու ինքզինքը կը գտնէ անմիթթար վիճակի մէջ:

Հիբանան այցելողներէն շատեր յատուկ կերպով քաղինո կ'այցելեն «հաճոյք»ը ապրելու համար: Սակայն այդ հաճոյքը շատ քիչ բախտաւորներուն դուռը կը գարնէ, որովհետեւ խորքին մէջ բախտի ու խաղի կողքին այլ խաղեր են, որ կը տիրապետեն եւ քաղինո յաճախողին գրպանէն դուրս կը սահեցնեն անոր օրերու աշխատանքին վատտակը:

Տարօրինակ է քաղինոյի աշխարհը, աւելի տարօրինակ ու խղճալի է այդ աշխարհով տարուողներուն եւ անոր հետ ապրողներուն վիճակը եւ պարզած պատկերը: Դժբախտաբար, հոն մտնողը չի գգար, թէ ինչ կը պատահի, մինչեւ որ հասնի անվերադարձ սահմանը, կէտը ուրկէ ետ դարձ դժուար ու գրեթէ անկարելի է ընել. քառս մը, որ մարդը հաճոյքով իր մէջ կը պահէ ու ցաւով ու պարտքերով բեռնաւորուած դուրս կը նետէ գայն...

# ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

## ԲՆԱՍՊԻՏՈՎ ՀԱՐՈՒՍՏ ՄՆՆԴԱԿԱՆՈՆԸ

Մեր օրերուն ծանրութիւն կորսնցնելու միջոցը դիւրացած է՝ շնորհիւ բնասպիտով (փրոթէին) հարուստ սննդականոնին: Այս սննդականոնին հետեւելը շատ դիւրին է եւ անոր արդիւնքը՝ ազդեցիկ: Աւելորդ ծանրութիւն կը կորսնցընես արագօրէն, առանց ֆիզիքայէս տկարացած ըլլալու:



Լոկրամ կորսնցնելը քաջալերելի չէ այն անձին համար, որ տասը, տասնհինգ կամ քսանհինգ քիլոկրամ պէտք ունի կորսնցնելիք:

3.- Ուտելու փորձութիւնը պատճառ կը դառնայ, որ շատեր հրաժարին այս ձեւի սննդականոններու հետեւելէ, մանաւանդ որ անօթութեան զգացողութիւնը միշտ ներկայ է:

Վերոյիշեալ պատճառներով քիչ ջերմութ պարունակող սննդականոնները չեն յանձնարարուելը գիրութեան դարմանումին համար: Երեւակայեցէք, որ սրտի հիւանդութեան տառապող սննդականոնի մը եւ բաւական ծանրութիւն կորսնցնելէ ետք, վերադառնալու ստիպուելու իր հին սովորութեան: Այս մէկը մեծապէս պիտի վտանգէ անոր առողջութեան:

### ՔԵՌՈՒՄԵՆԻՔ ՄՆՆԴԱԿԱՆՈՆԸ

Բնասպիտի «ծոմապահութիւն»ը կը նուազեցնէ մարմնին ճարպի քանակը եւ զարկ կու տայ մարմնին համար անհրաժեշտ ասիտոքէթոսիսին, գործիչ Սթանբարտ կոչեց քէթօճէնիսիս: Երբ մարմինը քէթօճէնիսիսի միջոցով աւելորդ ճարպերը կ'ոչնչացնէ, նոյնիսիք քէթօճէնիսիսը ուժեղանումը (energy) կը ստանայ:

Սննդականոնի այս ձեւը ապահով է եւ՝ գիտակցութեան փաստուած: Անշուշտ անկախ միայն մասնագէտներու կողմէ պէտք է տրուած ըլլայ:

Բնասպիտի «ծոմապահութիւն»ը ունի կարգ մը առաւելութիւններ, գորս ոչ մէկ այլ սննդականոն ունի՝

- 1) անօթութեան զգացողութեան չզգոյթիւն
- 2) արագ արդիւնք
- 3) մկաններու պահպանում
- 4) աշխուժութիւն
- 5) ապահովութիւն
- 6) առողջութիւն
- 7) դիւրութիւն
- 8) քունի բնականոն ընթացք
- 9) մորթի բնական ձեւ
- 10) չափերու հաւասարակչութիւն

ՔԱՐԱԸ ԵԱՐՏԵԱՆ

բար անոր առաջը առնելու եւ դարմանելու անհրաժեշտ է: Գիրութեան պատճառները գանազան են՝ ծինային, զգացաճարպ պարունակող ուտելիքներէ հեռու մնալ փանկրէտը հանգիստ պահելու համար: Այս կէտէն կրնանք հետեւեցնել, որ մարմինը ուժ (energy) կը ստանայ իր պահեստէն: Ձեւափոխման ընթացքին ճարպը կը յառաջացնէ նիթեր (ketonic substances), որոնք կ'ազդեն ուղեղին վրայ եւ անօթութեան զգացողութիւնը կը դանդաղեցնեն:

Մասնագէտներու պարտականութիւնն է ներկայացնել սննդականոնի այնպիսի տեսակներ, որոնք անօթութեան զգացողութիւնը կը դանդաղեցնեն: Բնասպիտի «ծոմապահութիւն»ը անօթութեան զգացողութիւնը կը չբանայ 48 էն մինչեւ 72 ժամ:

Ի՞նչ է սննդականոնի այս ձեւը:

### ՔԻՉ ՁԵՐՄՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՎ ՄՆՆԴԱԿԱՆՈՆԻ ՉԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Քիչ ջերմութ պարունակող սննդականոնները նորութիւն չեն: Բժիշկ Սթանբարտ փաստած է, որ այս ձեւի սննդականոնները ճարպերը կը նկատուին, որովհետեւ գիրութեան դարմանութիւն մէջ միայն ութ հարիւր տոկոսով արհիւնը կու տան: Անշուշտ, տակաւին եթէ անոնք ծիւղ ձեւով գործադրուին, շատ աւելի դժուար եւ յոգնեցուցիչ կը դառնան գլխաւոր երեք պատճառով՝

1.- Այս սննդականոնները անօթութեան զգացողութիւնը չեն չբացըլիքներ՝ քաքառոյի, քափուչիցի, քարամէլի, տուրմի եւ այլն: Անոնք իրենց մէջ կը պարունակեն՝ կենսաքիմիքալ տեսակներ, փոթասիտմ եւ քալսիտմ:

Առաջին շրջանին արթնի գործածութիւնը արգիւտած է: Սննդականոնի կիրարկման երկրորդ շրջանին արտօնած է ուտել ձուկ կամ հաւ, ճերմակ պանիր, սակայն սննդականոնը միշտ հիմնուած է բանջարեղէնի վրայ: Յաջորդելու համար պէտք է գիտնալ բանջարեղէնով գանազան ուտելիքներ պատրաստելու ձեւեր: Տեսելով սննդականոնին արդիւնքին մասին՝ ըսենք, որ մէկ ամսուան ընթացքին կիներ կը կորսնցնեն 6 - 8 քիլոկրամ, իսկ այդ մարդիկ՝ 8 - 10 քիլոկրամ:

www.lemagan.com

**ԸՆՏԱՆԻՔԻ ԲՈՒՈՐ ԱՆՂԱՍԵՐՈՒՆ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄՏԱՀՈՂՈՒԹԻՒՆԸ**

**SHOWER CABINE CENTER**

Ձեր լոգանքի վարագոյնները Bac a Douche et Bainoire փոխարինեցէք շարժական ակիւմիտով եւ փլասթիկ կազմածներով, որոնք հիմնուած են բժշկականօրէն ընդունուած միջազգային չափանիշներու վրայ՝ ապահովելով մորթային եւ այլ հիւանդութիւններու մարմնի մաքրումը:

Այլազան չափեր, մատչելի գին, տեղադրելը՝ Լորի, եւ երաշխաւորուած աշխատանք:

Դիմել՝ **ԹԱՂԵՍ ԷԼՍԱՅԵԱՆ** հաստ. Սրտ էլ Պատշարի, Զամի Շամուն պողոտայ: Հեռ. 03-392088 եւ 03-476018:

### ԼԻԱՆԱՆԵԱՆ ՔԱԶԻՆՈՆ

Լիբանանեան քաղինոն հիմնուած է 1 Նոյեմբեր 1959ին, Ժուլիէի հիւսիսային բարձունքին վրայ: Անկախ կը նկատուի Միջին Արեւելքի ամէնէն մեծ զբօսաշրջային կեդրոններէն մէկը: 1960ական թուականներէն անկախ դարձած է զանազան երկիրներէն շրջան այցելողներուն գլխաւոր ժամադրավայրը:

Քաղինոն օժտուած է մեծ սրահներով, ճաշարաններով, սենեակներով, պատշգամբներով ու քատերսարահներով:

Տարիներ շարունակ անկախ դարձած է փառաստուած եւ մեծ հանգիստութիւններու կեդրոն: Ընդունած է հոգեւորականներ ու խումբեր:

Քաղաքացիական պատերազմի տարիներուն քաղինոն եւս քայքայուեցաւ: Ան աւելի ուշ վերաշինուեցաւ, աւելի արդիական ձեւով կահաւորուեցաւ եւ օժտուեցաւ անհրաժեշտ բոլոր սարքերով:

Քաղինոյին մէջ աշխատող իւրաքանչիւր պաշտօնեայ ունի իրեն յատուկ աշխատանքն ու ամսականը, որ կը տարուի բոլոր պաշտօնի ու դիրքի:

Քաղինոն վերջերս օժտուեցաւ նաեւ աւելի լայն կառատուցով ու սրահներով:

«ԱՉԴԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱՉԴԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերով: - 258526, 260115 եւ 241274:



# Կնոջական

## ՆՈՐԱՉԵՒՈՒԹԵԱՆ ԱՃԵԱՐԸԵՆ

### ՅԱՌԱՋԻԿԱՅ ԱՇՈՒՆ-ՉՄԵՌ ՆՈՐԱՉԵՒՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ստորեւ գլխաւոր կէտերով կը ներկայացնենք յառաջիկայ եղանակին նորաձեւումը, մինչ նկարները աւելի յստակ պատկերացում մը պիտի տան մեզի, թէ ինչ պիտի կրենք յառաջիկայ ամիսներուն՝ քայլ պահելու համար աշխարհի մեծագոյն ձեւագէտներուն յղացումներուն հետ:



#### ՊՈՒՆՉՈՆ

Յառաջիկայ եղանակին փշերու եւ տարատեսակ վրայէն պիտի կրենք նիւզ, կաշի, կերպաս պլուզներ (կարճ բաճկոններ):

#### ՓԵՇԵՐ

Կարճ, երկար, լայն, նեղ, փխե... այսպէս են յառաջիկայ եղանակի փշերը:

#### ՄՈՒՍԼԻՆ

Գիշերային հագուստներու եւ պլուզներու պարագային մուսլինը տիրական է:



գային մուսլինը տիրական է:

#### ԵՐԿԱՐ ՄՈՅԿԵՐ

Երկար մոյկերը կրկին վերադարձած են, բայց կան նաեւ կարճերը, շատ յաճախ պիտի հանդիպինք նաեւ կծկով կոշիկներուն:

#### ԳՕՏԻ ԵՒ ՊՆՅՈՒՄԱԿ

Յառաջիկայ եղանակի նորաձեւումներուն տիրական արքեսուարներն են լայն, նեղ, ծոպաւոր գոտիները, եւ զանազան չափի գունաւոր, ծոպաւոր եւ գամբրով զարդարուած գոտիները:

Նշեալներէն շատեր հաւանաբար գոյուցիւն ունին ձեռք պահարանին մէկ անկիւնը, ժամանակն է, որ զանոնք մէջտեղ հանէք:



## ՏԱՆ ԴԱՍԱԴՐՈՒՄ

### ԻՆՉՊԷՍ ՄԱՔՐԵԼ ԽՄԻՉՔԻ ԵՒ ԱՅԼ ԱՐԱՏՆԵՐ

Պտուղի, խմիչքի, արիւնի եւ այլ արատներ պէտք է ամփոփել մաքրել՝ լաւ արդիւնքի հասնելու համար: Երբեք արատները տաք ջուրով չմաքրել, որովհետեւ անոնք աւելի կը հաստատուին չքամալու փոխարէն: Արատները մաքրելու ժամանակ շրջանակաձեւ շարժումներ չընել՝ զանոնք աւելի են չտարածելու համար, այլ դուրսէն դէպի կեդրոն կտրուկ հարուածներով ջամալ մաքրել զանոնք:

#### ԻՆՉՊԷՍ ՄԱՔՐԵԼ ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆ ԱՐԱՏԵ

● Եթէ մորթիին կամ սեղանի ծածկոցին վրայ կարմիր գիւնի թափեցաւ եւ ձեռք ձեռքին տակ ճերմակ գիւնի ունիք, անմիջապէս ճերմակը թափեցէք կարմիրին վրայ, ապա թաց սպունգով մը սրբեցէք եւ, վերջապէս, չոր լաթով մը ցամաքեցուցէք:

● Գորգի եւ մորթիի պարագային, թափած կարմիր գիւնին սպունգով մը մաքրեցէք, ապա գորգի յատուկ շամփուէնով սրբեցէք եւ, վերջապէս, թաց լաթով մը չափեցէք:



Թէյի արատը մաքրել պորաքսով

#### ԻՆՉՊԷՍ ՄԱՔՐԵԼ ՊՏՈՒՂԻ ՀԻՒԹԻ ԱՐԱՏՆԵՐԸ

● Հագուստի վրայ պտուղի հիւթին արատը մաքրելու համար զայն պաղ ջուրի տակ բռնել, ապա օգտագործել կապոյտ ալբոլը կամ արատը մաքրող սփրէյ մը:

● Սոքէթի վրայ թափել եւ, վերջապէս, գորգի յատուկ շամփուէնով մաքրել:

● Պտուղի արատները մաքրելու համար կարելի է զանոնք չափել կիսուած կիտրոնի կտորով մը:

#### ԳԱՐԵՉՈՒՐԻ ԱՐԱՏՆԵՐ


● Մորթիին վրայէն գարեջուրի արատ մը մաքրելու համար նախ անմիջապէս ծծուն թուղթով մը ցամաքեցնել զայն, ապա գաղջ ջուրով սրբել եւ, վերջապէս գորգի շամփուէնով մաքրել:

● Եթէ գարեջուրի արատը հինէն մնացած է, կարելի է օգտագործել կապոյտ ալբոլը:

#### ԹԵՅԻ ԱՐԱՏՆԵՐ


Թէյի արատը մաքրելու համար նախ ցորուել գաղջ ջուրով, ապա հալուստը, ծածկոցը կամ ինչ որ է թրջել պորաքսի մէջ (պորաքս սոսիոմի եւ պոռի աղ է):

● Եթէ թէյի արատը հին է, ծածկոցը, չափիկը կամ ինչ որ է տեղաւորել տաշտի մը վրայ, արատը ծածկել պորաքսով, ապա եռացած ջուր թափել շրջանաձեւ շարժումով, դուրսէն դէպի կեդրոն:



Կարմիր գիւնի արատը մաքրել թալքով

● Կարասիններուն, յատկապէս ճաշասենեակի աթոռներուն վրայ թափած կարմիր գիւնին նախ լաթով մը ցամաքեցուցէք, ապա մաքուր թաց լաթով մը սրբեցէք եւ վրան թալք ցանցէք: Քանի մը վայրկեան ետք խոզանակով մը մաքրեցէք թալքը: Եթէ արատը բոլորովին չհանձնուանայ, գործողութիւնը կրկնեցէք:



Պտուղի արատը մաքրել կիսուած կիտրոնով

## ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

### Ո՞Ր ՍԵՆԵԱԿԸ, Ի՞ՆՉ ԳՈՅՆ...

Տան զանազան սենեակները ի՞նչ գոյն ներկել, որպէսզի աւելի հանգիստ զգանք: Ահաւասիկ՝ տան ներքին յարաբանքի մասնագէտ Օտիլ Պուքսիորոյի կարծիքը:

#### ՆՆՋԱՍԵՆԵԱԿԸ

Ճերմակը, փղոսկրի գոյնը եւ մեղմ գոյնները ընդհանրապէս հանդարտեցնող են, հետեւաբար յարմար՝ ննջասենեակներուն: Եթէ վառ կարմիրը սիրող էք, դուք ձեռք մի՛ զրկէք այդ գոյնէն, բայց բաւարարուեցէք մէկ պատ միայն այդ գոյն ներկելով եւ կամ դրան եւ պատուհանին շրջանակները ներկեցէք ձեռք սիրելի գոյնով:

\*\*\*

#### ԼՈԳԱՆՔԻ ԲԱՂՆԻՔԸ

Ճերմակ, կապոյտ կամ կանաչ՝ այս գոյնները մեր մէջ կ'արթնցնեն մաքուր ջուրի, թարմութեան եւ մաքրութեան զգացումները:

Այս գոյններուն խառնելով հողի գոյնը, դեղին ու նարնջագոյնը՝ միջերկրականեան միջնորոտ մը կը ստեղծէք բաղնիքին մէջ:

\*\*\*

#### ՀԻՒՐԱՍԵՆԵԱԿԸ

Չուարթի եւ վառ գոյնները «հիւրընկալ» կը դարձնեն ձեր հիւրասենեակը:

Մեղմ եւ բաց գոյնները խաղաղութիւն կը սփռեն: Փայտի եւ հողի գոյնները ջերմութիւն եւ միջնորոտ կը ստեղծեն:

\*\*\*

#### ԾԱՇԱՍԵՆԵԱԿԸ

Նարնջագոյնը, տփոյն դեղինը, հողի գոյնը հիւրընկալ միջնորոտ կը ստեղծեն ձեր հիւրասենեակը: Կրնաք, այս գոյններուն հետ, պատերէն մէկը պիտակի կանաչ կամ մանիշակագոյն ներկել եւ որոշ դրոշմ մը տալ ձեր ճաշասենեակին:

\*\*\*

#### ԽՈՂԱՆՈՑԸ

Հոս տարբալուծարանը կը յիշեցնէ, հոս է, որ զանազան բաղադրութիւններ իրարու խառնուելով ճաշեր մէջտեղ կու գան: Հետեւաբար չվարանինք գոյնները խառնելու, ներդաշնակելու եւ հաճելի անկիւն մը ստեղծելու՝ կարմիրը, մանիշակագոյնը, վարդագոյնը, դեղինը իրարու խառնելով:

\*\*\*

Ինչ կը վերաբերի վերոյիշեալ սենեակներու լուսաւորումին, ննջասենեակին ու նստասենեակին լուսաւորումը պէտք է ըլլայ մեղմ: Խոհանոցին լուսաւորումը պէտք է ըլլայ զօրաւոր, հիւրասենեակին ու ճաշասենեակը, նայած առիթներուն, կարելի է մեղմ կամ զօրաւոր լուսաւորել ի հարկին հալոթէն սիւներ կամ անկիւնի լուսամփոփներ օգտագործելով:

## ԽՈՐԱԳԻՐ

- Բաղադրութիւն
- 12 թարմ կանկառի սիրտ
- 4 պճեղ սխտոր
- Ապուրի դգալ մը մանրուած ազատքեղ
- Ապուրի դգալ մը մանրուած անանուխ
- 2 կիտրոնի հիւթ
- 5 ապուրի դգալ ձիթաիւղ
- 1 ապուրի դգալ քաջախ
- Պտղունց մը աղ
- Շաքար

Պատրաստութիւն  
Կանկառները չորսի բաժնել, միջուկը մաքրել եւ կտորները դնել կիտրոնով ջուրի մէջ, որպէսզի չսեւնան: Սխտորները կեղուել եւ բարակ շերտել: Տապակի մը մէջ 2

## ԿԱՆԿԱՌԻ ԱՂՅԱՆ



դգալ ձիթաիւղ տաքցնել եւ սխտորները մէջը դարձնել, ապա աւելցնել 50 սանթիլիթր ջուր, կիտրոնի հիւթը, շաքարը, աղը եւ 5 վայրկեան եփել

թեթեւ կրակի վրայ: Յօդուել եւ ցամաքեցնել կանկառները, աւելցնել թացանին վրայ եւ 15-20 վայրկեան եփել, մինչեւ որ կանկառները եփին: Կանկառները հանել եւ ներկայանալի ամանի մը մէջ շարել, թացանին վրայ աւելցնել մնացեալ ձեթը, քացախը եւ աղը: Ստացուած թացանը թափել կանկառներուն վրայ, խառնել եւ երեսը յանել մանրուած ազատքեղն ու անանուխը: Ստանարանը պահել 15-20 րոպէս: Ստանարանը պահել 15-20 րոպէս: Ստանարանը պահել 15-20 րոպէս:

Ստանարանը պահել 15-20 րոպէս: Ստանարանը պահել 15-20 րոպէս: Ստանարանը պահել 15-20 րոպէս:

## ՃԻՇԴ ԵՒ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ՔՈԼԵՍԹԵՐՈԼԻՆ ՄԱՍԻՆ

### ● ՔՈԼԵՍԹԵՐՈԼ ՈՒՆԵՆԱԼԸ ԲՆԱԿԱՆ Է: ԱՆ ՈՐՈՇ ԳԵՐ ԿԸ ԽԱՂԱՅ ՄԵՐ ՄԱՐՄԻՆ ՄԵՉ:

Ճիշդ է: Քոլեսթերոլ ունենալը բնական է մարմնին մէջ: Անոր երեք չորրորդը լեարդն է, որ կ'արտադրէ, միայն քառորդն է, որ ուտելիքներու ճամբով կը ստանանք:

Ինչի՞ կը ծառայէ... Ան մաս կը կազմէ մեր բջիջներու կեղեւին, յատկապէս՝ ուղեղի բջիջներուն: Ան կը ծառայէ Տէ. կենսանիւթը պատրաստելու, իսկ Տէ. կենսանիւթը կիրք կը հաստատէ ոսկորներուն վրայ: Ան նաեւ կը մասնակցի մաղձի արտադրութեան, ինչ որ իր կարգին կը մասնակցի մարսողութեան: Վերջապէս, ան կը ծառայէ սեռային հորմոններու արտադրութեան:

### ● ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՔՈԼԵՍԹԵՐՈԼ ԿԱՅ:

Ճիշդ է: Ե՛. Տէ. է՛. կամ՝ լաւ քոլեսթերոլը, եւ ԱՇ. Տէ. է՛. կամ՝ լաւ քոլեսթերոլը:

Առաջինը լեարդին կողմէ արտադրուած քոլեսթերոլը կ'առաջնորդէ դէպի կարիքը ունեցող գործարանները, իսկ երկրորդը գործարաններէն կ'առնէ աւելորդ քոլեսթերոլը, որ կրնայ երակները խցել, եւ կրկին կը տանի դէպի լեարդ, ուր կը չէզոքացուի: Բազմաթիւ ուսումնասիրութիւններ փաստած են, որ Ե՛. Տէ. է՛-ի կուտակումը կրնայ արտանօթային հիւանդութիւններ պատճառել, մինչդեռ ԱՇ. Տէ. է՛-ի բարձրացումը օգտակար է մեր առողջութեան:

### ● ՔՈԼԵՍԹԵՐՈԼԻՆ ՇԱՏԸ ԿՐՆԱՅ ԺԱՌԱՆԳԱՎԱՆ ԸԼԼԱԼ:

Ճիշդ է ՍՈՒԱԼ: Հագուստի քոլեսթերոլը ժառանգական կ'ըլլայ: Առհասարակ բարձր քոլեսթերոլը հետեւանք է գէշ եւ սխալ սննդաւորութեան եւ նստակեցած կեանքի: Շատակեղութիւնը, կենդանական իւղի չափազանց սպառումը, շարժումի եւ մարզանքի պակասը լուրջ

պատճառներ են քոլեսթերոլի բարձրացումին:

### ● ՍՆՆԴԱԿԱՆՈՒՆԻ ՀԵՏԵՒԵԼՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՊԵՐՏՆԵՆԵԼ ՔՈԼԵՍԹԵՐՈԼԸ:

Ճիշդ է: Կարելի է 2-ն 3 ամսուան ընթացքին պակասեցնել բարձր քոլեսթերոլը: Իսկ եթէ 6 ամսուան ընթացքին չբարելաւորի, բժշկը դեղերով կը փորձէ նուազեցնել զայն:

### ● ՄԱՐՁԱՆՔԸ ՈՉ ՄԵԿ ԳԵՐ ՈՒՆԻ ՔՈԼԵՍԹԵՐՈԼԻ ՆՈՒԱՋՈՒՄԻՆ ՄԵՉ:

ՍՈՒԱԼ: Հետեւողական մարզանքը կը նպաստէ լաւ քոլեսթերոլի բարձրացումին, անիկա նաեւ կը բարելաւէ արեան շրջապտուկները, կը դիւրացնէ նիւթալու ընթացքը եւ կը նուազեցնէ շաքարախտի հասանակները:

Շաքար 3 անգամ կէսական ժամ միջակ արագութեամբ քայլել կը պաշտպանէ մեր սիրտը:

### ● ԲԱՐՁՐ ՔՈԼԵՍԹԵՐՈԼԸ ԿԸ ԽՅԵ ԵՐԱԿՆԵՐԸ

Ճիշդ է: Քոլեսթերոլի չափազանցութիւնը իւղի պահեստներ կը կազմէ երակներու ներքին պատերուն վրայ: Ժամանակի ընթացքին այդ պահեստները կը թանձրանան եւ կը նեղցնեն երակները: Նայած թէ ո՞ր երակը խցուած է, անհանգստութեան տեսակը կը տարբերի:

Այսպէս, եթէ սիրտը սնանոց երակներն են խցուածները, սրտի կաթուած կը պատահի. իսկ եթէ ուղեղի երակներն են խցուած, ուղեղի կաթուած կրնայ պատահիլ: Անհանգստութեան ծանրութիւնը կախեալ է երակին խցումի աստիճանէն:

## Պատրաստե՛ք ՇՈՒԹԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

**GOLDEN ROCK**

\$50- ԷՆ ՍՊԵՏԱԼ ՀԱՐԱՆԵԿԱԿԱՆ ՀՎՈՒՍՏԵՐ

Այս կտորնք ներկայացնալը կը տաւանայ 35% զեղծ

Հասցէ՝ Պոլոք Համոն, Մարաշ քաղ. «Հասու-չիթը»-նի սօս: Հեռ. 01/260788

Հ.Մ.Բ.Մ. ԼԻԲԱՆԱՆԻ...

Շարունակում՝ 4րդ էջէն

Անոնք նաև իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչեանին՝ անոր գերեզմանին ծաղկեպսակ զետեղելով: Հ.Մ.Բ.Մ-ի շեփորախումբը հնչեցուց մահերգը եւ այդ երաժշտութեան կշռոյթին տակ սկսուեցին պատուի առած՝ յարգեցին յիշատակը Արցախի ազատագրական պայքարին ընթացքին զոհուած բոլոր նահատակներուն:

Հինգշաբթի օր Լիբանանի պատուիրակութեան խմբակցական կազմը այցելեց Հայաստանի մէջ Լիբանանի դեսպան Թոնի Պատաուէի, որ ջերմ ընդունելութիւն ցուցաբերեց սկսուեցին նկատմամբ: Հանդիպումին ընթացքին խոսուեցաւ Լիբանանի եւ իբրանահայութեան դերին, ինչպէս նաև Լիբանանի եւ Հայաստանի միջեւ եղած նմանութեան մասին: Հանդիպումի աւարտին սկսուեցին յուշանուէր մը յանձնեցին դեսպանին:

Համա-Հ.Մ.Բ.Մ-ական բանակումէն եւ չորսօրեայ այս շրջապտոյտէն ետք սկսուեցին զգացնի նախագահ Արկաղի Ղուկասեանի խօսքին փաստացիութիւնը եւ անմոռանալի եւ հանելի օրերը անցընելէ ետք վերադարձան Պէյրուս:

«ԱՉԳԱԿ»Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅԱՆՔ

ՎԱՐՅՈՒՄ ԹԻՒ 22

Ի՞նչ կը կոչուի երկրագունդին շուրջ ծիրի վրայ դրուած եւ տակաւին շինութեան մէջ եղող այն կեդրոնը, ուր անջրպետի զբօսաշրջիկներ կ'այցելեն վերջին երկու տարիներուն: Բանի՞ երկիրներ կը մասնակցին այդ կեդրոնին շինութեան:

(2 ԳԻՅ)

Անուն : .....

Մակամուն : .....

Շաքտ : .....

Ընդ.:

Ծանօթ.- Պատասխաններու կտրոնները «Ազդակ»ի խմբագրութեան փոխանցել մրցանքի բոլոր հարցումներուն ներկայացումէն ետք:

30 ԱՍԵՒԿԻ ԱՌԻԹՈՎ 30,000\$ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՓՈԼԻԿԼՕԹ Թեքնիկական կարիքաւոր եւ փայլուն սաներու ԾԱՆՕԹ.- Նախապատուութիւնը պիտի տրուի կանուխ դիմողներուն Արձանագրութիւն ամէն օր ՓՈԼԻԿԼՕԹ քոլէճ, Տորա 01 - 251320 Տէր եւ փոօրէն ՊԵՏՐՈՍ ՇԵՄԵՍԵԱՆ

Table with 2 columns: Item name and Price. Includes categories like ՍԱԿԱՐԱՆ, ՍՈԿԻ, ՍՈԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ.

Table with 2 columns: Item name and Price. Includes categories like ՍՈԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5222 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 Grid for puzzle 5222.

Table with 2 columns: ՇՐՈՒՂՈՆԱԿԱՆ and ՈՒՂԱՆԱՅԵՏ. Lists puzzle solutions.

ԹԻՒ 5221 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 Grid for puzzle 5221.

ՕՐԱՏԵՏՐ ՓՄՈՒՍՕՏԵՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

Ալեքի քան ամիսէ մը ի վեր Ալեքի քան քաղաքային տարածքները ձեռնարկած է վերջին քանի մը տարիներուն ամառը: Անոնք դարձած կիրառական արուեստի իր համագումարին: Համագումարը կ'երկարի մինչեւ 21 Օգոստոս:




Նախապատուութիւնը արարական արարական աշխարհի առաջնակարգ ամառանոցը նկատուող Ալեքի վերջին քանի մը տասնամեակներու ամառը: Անոնք անոր աշխուժութիւնը վերականգնելու անոր աշխուժութիւնը անոր արուեստը: Անոնք մտածուած արարական արարական աշխարհի տարբեր կողմերէն, նոյնիսկ Մոնոլիթայէն եւ Աւտորալիայէն եկած արուեստագէտներ: Գեղանկարիչներուն կը հարաւորուին ձիւ պիտոյնքներ երեք օրէն մինչեւ մէկ շաբթուան ժամանակ ամբողջացընելու համար նուազագոյնը երկու գեղանկարներ, որոնք կը դառնան Ալեքի քաղաքային տարածքին սեփականութիւնը: Սակայն այս պայմանները, արուեստագէտներուն իսկ վկայութեամբ, պատճառ կը դառնան, որ անոնց գործերուն որակը տուէ:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

TV schedule for ՀԵՌԱՏԵՍԻԼ. Lists channels like ԹԷ. ԷԼ., ՄԹ. ՎԻ., ԷԼ. ՊԵ. ՍԻ., ԵԼ. ՊԵ. ԵՆ. and their respective programs.

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԵՋ

### ՌԻԱՅՏԱԹ - ՆԸԺՄԵ՝ 3-2

Ասիոյ ֆուտբոլի ախոյեանութեան մրցաշարքին, որ այսուհետեւ պիտի ճանչցուի «2էմփիրնիկ Լիկ» անունով, Ա. հանգրուանի երրորդ փուլի կատարած մրցումին, Լիբանանի ախոյեան Նըժմէ 3-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց յորդանանեան Ուստաթ խումբէն, այս վերջինին դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին ընթացքին:

Հակառակ անոր որ Ա. կիսախաղը վերջ գտաւ 1-1 արդիւնքով, սակայն Բ. կիսախաղին յորդանանեան խումբը արձանագրեց իր յաղթանակը, նշանակելով երկու կոլ, որոնցմէ մէկը՝ փենալթիով: Նըժմէի կոլերը նշանակեցին Մուսա Հըժեյժ (8րդ) եւ Պիլալ Ֆլէյֆէյ (75րդ):

Դարձի մրցումը, որ տեղի պիտի ունենայ Պէյրութի մէջ, յառաջիկայ 28 Օգոստոսին, լիբանանեան կապիտան համար պիտի ըլլայ կարեւոր: 1-0 արդիւնքով յաղթանակ մը բաւարար պիտի ըլլայ Նըժմէի, որ անցնի Բ. հանգրուան:

●ՖՈՒԹՊՈՒԼԻ բարիկամական մրցումի մը ընթացքին, Անսար 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Աիսա Աիլի Ալէյը (կիսախաղ՝ 1-0, ի նպաստ՝ Անսարի) Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին: Անսարի համար այս մրցումը պարտաստութիւն մը եղաւ յառաջիկայ միւս Ֆայսալիի դէմ (Յորդանան) տեղի ունենալիք Ասիոյ ակումբներու ախոյեանութեան բաժակի մրցաշարքին համար:

## ԹԵՆԻՍ. ԻՆՏԻԱՆԱՓՈՒԼԻՍ

### ՍԱՐԳՍԵԱՆ ԴՈՒՐՍ ՄԵԱՅ

Ինտիանափոլիսի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցող թենիսի տղոց ախոյեանութեան մրցումներուն Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան չկրցաւ շարունակել իր յաղթական երթը եւ պարտութիւն մը կրելէ ետք 6րդ դասուած ֆրանսացի Սեպասթիան Կրոժանէն, դուրս մնաց մրցաշարքէն, հակառակ անոր որ Սարգսեան առաջին սէթին յաղթանակ մը արձանագրած էր: Մրցումը վերջ գտաւ ֆրանսացիին յաղթանակով՝ 3-6, 6-3 եւ 6-3:

Կրժանի նման Գ. հանգրուանին իր տուժար պահովեց նաեւ 3րդ դասուած գերմանացի Թոմի Հասս, որ 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց շուէտացի Մակնուս Նորմալը:

Նշենք, թէ Ա. հանգրուանին պարտութիւն կրողներու շարքին եղաւ շուէտացի Եոնաս Պիորքման, որ 6-4 եւ 7-5 արդիւնքով պարտուեցաւ 15րդ դասուած ֆրանսացի Անիս Բլեմանէն:



**CYCLOSPORT** since 1932

- 1- THE BICYCLE SHOP
- 2- BIKES & ACCESSORIES
- 3- CREDIT FACILITIES
- 4- SERVICES
- 5- NEXT BOLDERS

Sources: Korkijian & Sons Est. - GEMAYZEH, main road, facing Pigeon, Tel.: 01146792  
Nahy Beirut: 01/51757 - Jal el Dib highway: 04/713344 - E-mail: CYCLOSPORT@CYBERIA.NET.LB

**ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.**

**National Air Conditioner**

**360ՏԵՆ սկսեալ զանազան վաճառանիշով եւ չափերով «Էր Զոնտիսիոն»ներ**

Պուրճ Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ  
ՀԵՌԱԶԱՅԼ՝ 01-241000  
2րդ մուտք. Սանթրը Պլանքոյէն: Կառատունը ապահովուած:

## ՖԻՖԱԻ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

### ՊՐԱԶԻԼ ԿԸ ՄԱՅ ԱՌԱՋԻՆ, ՄԻՆՉ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՄՏԱՆ ՏԱՍԻՆ ՄԵՋ

ՖԻՖԱՆ երէկ հրապարակեց աշխարհի ֆուտբոլի ազգային խումբերուն ընդհանուր դասաւորումը, որ 2002ի Մոնտիալէն ետք երկրորդ անգամ ըլլալով կը հրապարակուի:

Պրազիլի ֆուտբոլի ազգային խումբը մնաց պարագլուխի դիրքին վրայ, իսկ Արժանթին՝ անոր ետին, երկրորդ դիրքին վրայ:

Տարբեր եղաւ սակայն պարագան Ֆրանսայի, որ դիրք մը եւս նահանջելով հասաւ 4րդ դիրքին, իր տեղը պիշելով Սպանիոյ:

Թէեւ Անգլիա եւ Իտալիա մէկական դիրքի ուսում արձանագրեցին, սակայն մտնէն աւելի ուշագրաւ եղաւ Միացեալ Նահանգներու ուսումը. ան իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, առաջին տասին մէջ դիրք մը գրաւեց:

Հետաքրքրական եղաւ Նոր Զելանտայի արձանագրած բաւական մեծ ուսումը, որ 88րդ դիրքէն բարձրացաւ 47րդ դիրք (41 դիրքի ուսում մը):

Իրաք 8 դիրքի ուսում մը արձանագրեց (այժմ՝ 60րդ), մինչ Լիբանանի եւ Սուրիոյ

ֆուտբոլի ազգային խումբերը մէկական դիրք նահանջեցին: Հայաստանի ֆուտբոլի

ազգային խումբը մէկ դիրքի ուսում մը արձանագրելով, այժմ կը գրաւէ 100րդ դիրքը:

Ստորեւ՝ առաջին քսան դիրքերը եւ կարգ մը կարեւորագոյն երկիրներուն գրաւած դասաւորումը (փակագիծից մէջ ճշուած է աճուց անցեալ ամսուան գրաւած դիրքը):

	ԿԵՏ
1. Պրազիլ (առաջին)	859
2. Արժանթին (2րդ)	781
3. Սպանիա (4րդ)	775
4. Ֆրանսա (3րդ)	772
5. Գերմանիա (5րդ)	764
6. Մեքսիքա (6րդ)	733
7. Անգլիա (8րդ)	728
7. Փորթուգալ (7րդ)	728
9. Իտալիա (10րդ)	714
9. Մ. Նահանգներ (11րդ)	714
11. Թուրքիա (12րդ)	707
12. Դանիա (13րդ)	703
13. Ալիը (14րդ)	699
14. Հոլանտա (15րդ)	693
15. Ելոնմպիա (9րդ)	688
15. Եուկրաինա (16րդ)	688
17. Զամբուի (17րդ)	682
18. Պէճիքա (19րդ)	677
19. Փարակուէյ (18րդ)	674
20. Շուէտ (20րդ)	673
21. Չեխիա (21րդ)	664
22. Հար. Եորթա (22րդ)	663
23. Ճափոն (24րդ)	658
24. Ուրուկուէյ (23րդ)	657
30. Ռուսիա (28րդ)	637
33. Իրան (33րդ)	633
35. Նորվեկիա (37րդ)	621
36. Նիւտ. Արաբիա (38րդ)	620
37. Լեհաստան (39րդ)	618
44. Եգիպտոս (44րդ)	587
47. Նոր Զելանտա (88րդ)	558
60. Իրաք (68րդ)	525
95. Սուրիա (94րդ)	429
98. Լիբանան (97րդ)	418
100. ՀԱՅԱՍՏԱՆ (101րդ)	416

### ԱՄԻՈՅ ԱԽՈՅԵԱՆԸ ՊԻՏԻ ՄՏԱՆՄԱՅ 500 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ

Ասիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը շարաթակիկներն յայտարարեց, թէ առաջին անգամ ըլլալով տեղի ունենալիք Ասիոյ ախոյեանութեան մրցաշարքին, յաղթական կապիտանի ստանալ 500,000 տոլարի գումար մը: Այս գումարը Ասիոյ մրցաշարքերուն ընթացքին առաջին դիրքը գրաւող կապիտանը նախապէս ստացած գումարներուն հինգ անգամն է:

Այս մրցաշարքը, որ եւրոպական «2էմփիրնիկ Լիկ»ին ափական տարբերակն է, Ճափոնի եւ Հար. Բորնայի մէջ տեղի ունեցած 2002ի Մոնտիալին յաջողութենէն ետք անհրաժեշտ է, աւելի եւս բարձրացնելու համար ափական ֆուտբոլին մակարդակը ըսաւ ֆետերասիոնին նախագահը՝ Փիթըր Վելսփան:

Այս մրցաշարքին պիտի մասնակցին 29 տարբեր երկիրներէ եկած 51 ակումբները եւ այս բոլորին տրուելիք նուէրներուն գումարը պիտի հասնի

մօտ 3 միլիոն տոլարի: ՖԻՖԱԻ նախագահը՝ Սեփ Դելբըրը ըսաւ. «Այս մէկը սքանչելի եւ շատ կարեւոր քայլ մըն է ափական ֆուտբոլին համար: Մոնտիալին ընթացքին ափական խումբերը փաստեցին, թէ կը մնան Կորուր խումբեր, իսկ այս

### ԿԱԼԱՐՏՕ՝ ՎԻՐԱԻՈՐ

Արժանթինի ֆուտբոլի ազգային խումբին եւ Մոնտիալի մարզիկներէն Մարսելօ Կալարսո աւելի քան հինգ շաբաթ պիտի բացակայի կանաչ դաշտերէն, յայտնեցին անոր խումբին պատասխանատուները:

Անցեալ Շաբաթ օր, Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան գծով, Մարսելի դէմ մրցումին Կալարսո 32րդ վայրկեանին թաքըլի մը ենթարկուելով վիրաւորած էր իր ծունկը: Մրցումը

մրցաշարքը առիթ մը պիտի ըլլայ աւելի եւս հարստացնելու այդ ցամաքամասին ֆուտբոլը, սակայն այս անգամ՝ ակումբներու մակարդակին գծով, ինչ որ բնականաբար իր լաւ անդրադարձը պիտի ունենայ միջազգային գետնի վրայ ալ:

վերջ գտած էր Մարսելի յաղթանակով (1-0):

Միւս կողմէ, Մոնտիալի բժիշկը յայտարարեց. «Կալարսոյ վիրաւորուիլը մեծ հարած մըն էր, բայց եւ այնպէս կ'ըտք է ուրախ ըլլանք այս քանով, որովհետեւ քաւր ան միայն երեքէն հինգ շաբաթ պիտի բացակայի»:

**ԻՆՉ ԿՐԵՆ ԿԱՍ ԿՐԵՆ ՓՕԼԻԿԼՕԹ ԶՈԼԵՃԻ ՇՐՋԱՆԱՄԱՐՏՆԵՐԸ**

«...Աւարտել ետք Փոլիկթի «Ինքիթը Տիգայն»ի դասընթացը, ընդունուեցաւ Զանտայի «Սրփի» համալսարանը: Այժմ, կը պաշտօնավարեմ մեծ ընկերութեան մը մէջ, Մոնթալ: Ծնորհակալութիւն Փոլիկթի...»:

ՇԱՆԹԱՆ ՄԱՅԵԿ

**BALKAN Holidays**

**VARNA**

**295 \$**

Կը ներփակէ երթուղարձի տոմս + պանդոկ + փոխադրութիւն

**ՎՃԱՐՄԱՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ**

Մազարա, Ուաքթ Ռուժեք, «Պանք Աուտի»  
01-304553/63 03-273251

## ԵՐԵՎԱՆԻ ՏՊՈՑ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ 3ԱՂԹԱՆԱԿՈՎ ՄԿՍԱՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 13 Օգոստոսին, Արաբական Համալսարանին մէջ սկսաւ Լիբանանի տղոց ախոյեանութեան աւարտական հանգրուանը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն 41 վարպետներ:

Նախապէս, Լիբանանի տարբեր նահանգներուն մէջ տեղի ունեցան Կոմի մրցումներ: Պէյրութի Կոմի մրցումներուն, որոնց իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 80 սիրահարներ, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասէն տոքթ. Գէորգ Թերպեան ապահովեց 4,5 կէտ եւ հանդիսացաւ 3րդ: Նոյնպէս, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասէն Սերժ Յովանեան հանդիսացաւ չորրորդ: Երկու Հ. Մ. Ը. Մ. սկսան մարզիկները իրաւունք ստացան հանդէս գալու աւարտական մրցումներուն:

Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի մարզիկներէն աւարտական հանգրուանին հանդէս գալու իրաւունք ստացաւ նաեւ Քնարիկ Մուրատեան, իբրեւ միջազգային դասուած վարպետ:

Աւարտական հանգրուանի առաջին ռաունտին Քնարիկ Մուրատեան արձանագրեց կարեւոր յաղթանակ մը: Սերժ Յովանեան հաւասարեցաւ միջազգային դասուած վարպետ Հանի Ամնունի հետ, մինչ տոքթ. Գէորգ Թերպեան պարտութիւն մը կրեց Լիբանանի նախկին ախոյեան Անթուան Քասսիսէն:

Երկրորդ հանգրուանի մրցումներուն, Քնարիկ Մուրատեան պիտի մրցի Իսամ Արաժիի, Սերժ Յովանեան՝ Ռաֆիք Պարաքարի, իսկ Գէորգ Թերպեան՝ Նաժիպ Մանսալի դէմ:

### ՎԻՐՔՈՎՈՏ՝ «ՖԻՈՐԵՆԹԻՆԱ 1926»Ի ՍԱՐԶԻԳ

Իտալացի միջազգային նախկին յետսապահ Փիթըրօ Վիթթոլոն նշանակուեցաւ «Ֆիորենթինա 1926»ի մարզիչ, յայտնեց ակումբին նոր սեփականատէրը՝ Տիեկօ Տելլա Վալէ:

Հարցալրոյցի մը ընթացքին, Տելլա Վալէ ըսաւ. «Մեր անց կարելին պիտի ընենք Ֆիորենթինան վերադարձնելու այն դիրքին, որ ան կը գտնուէր նախապէս: Այս մէկը տեղի պիտի ունենայ ամէնէն կարճ ժամանակամիջոցին»:

43 տարեկան Վիթթոլոն, որ 20 տարի իբրեւ մարզիկ մաս կապած է Իտալիոյ Ա. դասակարգին, կատարած է 562 մրցում:

### ՌՈՄԱՐԻՕ ԵՐԿՈՒ ԿՈԼ ՆՇԱՆԱԿԵՑ

Պրազիլի ֆուտբոլի ազգային խումբին նախկին աստղը՝ Ռոմարիօ, իր նոր ակումբին՝ Տլուսիմիսէնսէի հետ անցեալ շաբաթ վերջին նշանակեց 2 կոլ, երբ անոր կապմը 5-1 ջախջախիչ արդիւնքով մը պարտութեան մատնեց Քրուսէյրոն, Պրազիլի ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն գծով:



Ռոմարիօ

36 տարեկան պրազիլցի, որ Պրազիլի ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ՝ Լուիս Ֆելիպէ Սքուարիի կողմէ նկատի չէր անուած 2002ի Մոնտիալին, իր առաջին կոլը նշանակեց 43րդ վայրկեանին (փենալթիով). իսկ երկրորդը՝ կորուած վայրկեաններուն: Ֆլուսիմիսէնսէի մնացեալ կոլերը նշանակեցին՝ Մակնիս Ալվէս, Ֆերնանտօ Տիմիպի եւ Պէթօ, որ աւելի ուշ կարմիր քարտ մը ստացաւ, մինչ Քրուսէյրոյի կոլը նշանակեց Ֆապիօ Ժունիոր: Նշենք, թէ մրցումը տեղի ունեցաւ «Մարաքանա» դաշտին վրայ 67 հազար համակիրներու ներկայութեան:

Միւս կողմէ, Փալմէյրաս - Կրեմիօ (1-1) մրցումը, որ տեղի ունեցաւ Փալմէյրասի «Փարք - Անթրոփիքա» դաշտին վրայ եղաւ բաւական տաք: Մրցումին աւարտին, Փալմէյրասի մարզիչը՝ Վանտերի Լուքասմպուրօ մրցակից կապիտան մարզիկները դատապարտեց իրենց կոշտ խաղարկութեան համար, մինչ Կրեմիոյի մարզիկները զանգատ ներկայացուցին դաշտին վատ վիճակին համար:

Աթլէթիքօ Միսէյրօ - Քորինթիանս մրցումը վերջ գտաւ ի նպաստ՝ երկրորդին (2-1): Այս մրցումին ընթացքին Միսէյրոյի յետսապահ՝ Նէմ, դաշտին վտարուեցաւ, այսպիսով չորս մրցումի ընթացքին իր երրորդ կարմիր քարտը ստանալով:

Ախոյեան Աթլէթիքօ Փարանաէնսէ սակայն 2-1 արդիւնքով տեղի տուաւ Կուարանիի առջեւ:

## ԱՐԱՐԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԳԷՄ ԻՐԱՔԻ ԳԷՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՐԵՒԷ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ

Կ'ԸՍԵ ԱՍՐ ՄՈՒՏԱ

Ամերիկեան գաղտնի սպասարկութեանց արբանակները անցեալ շաբթուան մէջ արտասովոր շարժում նկատած են Իրաքի կենսաբանական վէճերու մէկ գործարանին շուրջ, հաղորդեց «Ուաշինկթըն Թայմս» երէկ:

Յիշեալ աղբիւրին համաձայն, ամերիկեան լրտեսութեան արբանակները միջոցով ստացած նկարները ցոյց տուած են վաթսուն բեռնատար ինքնաշարժներ, որոնք գործարան կը մտնէին ու կ'ելլէին: Ամերիկեան աղբիւրներուն համաձայն, գործարանը նախապէս կենսաբանական վէճերու պատրաստութեան կեդրոն էր: Յիշեալ կեդրոնը կը գտնուի Պաղատան մտաւորապէս տասը քմ. դէպի հիւսիսարեւմուտք:

Սի. Ա. Էյ.ի աղբիւրներ մեթոքին մեկնաբանութիւն կատարել «Ուաշինկթըն Թայմս»-ի հրատարակած տեղեկագիրին մասին:

Միւս կողմէ, ամերիկեան ծովուծը հաստատեց, որ կը փնտնէ հսկայ նաւ մը, որ պիտի կարենայ ուղղաթիւներ եւ վէճք փոխադրել Միջերկրական ծովէն դուրս: Մէկ օր առաջ, ծովուծը հերքած էր, որ այդպիսի նաւ մը կը փնտնէ: Անցեալ շաբթուան մէջ ալ ամերիկեան ծովուծը յայտարարած էր, որ Եւրոպայէն դէպի Միջերկրական ծովէն վէճք ու վիսամութեք փոխադրող նաւերու կարիքը ունի: Յիշեալ երկու պարագաները թափ կու տան Իրաքի դէմ ամերիկեան յարձակումի մը հաւանականութեան: Ըստ երեւոյթին, նախագահ Ճորձ Գուշ կ'ուզէ շրջանին մէջ վէճք ամբարել՝ որեւէ պահու պատրաստ ըլլալու համար Իրաքի դէմ յարձակումի մը:

### ՅԵՏԱՍՏԱՍԵԱՆ ԸՆԴՈՐՈՒՄՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹԻՒՆ ԴԻՏԻ ՏԻՐԷ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրլոյ Ռամսֆելտ ըսաւ, որ Ուաշինկթըն այցելած իրաքցի ընդդիմադիր ղեկավարները համակարծիք են, թէ Սատտամ Հիւսէյնի տապալումէն ետք, Իրաքի մէջ պէտք է հաստատուի ժողովրդավարութիւնը եւ Իրաք պէտք է դառնայ երկիր մը, ուր կը յարգուին փոքրամասնութիւնները, ուր կ'իշխէ օրէքս եւ ուր մարդիկ առիթ ունին մասնակցելու իշխանութեան: Ռամսֆելտ աւելցուց, որ ընդդիմադիր ղեկավարները համաձայն են նաեւ, որ Իրաք պէտք է դառնայ պետութիւն մը, ուր գոյութիւն չունին հաւաքական քանդումի վէճերը, ինչպէս նաեւ Պաղատան իր կամքը պիտի չպարտադրէ իրաքցիներուն: Ռամսֆելտ չափազանց շնորհ է արդիւնաւէտ նկատեց իրաքցի ղեկավարներուն հանդիպումները ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներուն հետ:

Իրաքեան ընդդիմադիր շարժում մը երէկ յայտարարեց, որ իր հետեւորդներէն քանի մը պիտեալներ վիրաւորած են Սատտամի պալատներէն՝ Քուսայը: Մեծուական «Շարք Սուսաթ» օրաթերթին մէջ յոյս տեսած լուրին համաձայն, Քուսայ թեւէն վիրաւորուած է Օգոստոս 1ին, երբ պիտեալներ կրակ բացած են անոր ինքնաշարժին վրայ, Պաղատան թաղամասերէն մեկուն մէջ:

Իրաքեան պաշտօնական աղբիւրներ չհաստատեցին լուրը:

● ԱՐԱՐԱԿԱՆ Լիկան յայտարարեց, որ արաբական բոլոր երկիրները կը մերժեն Իրաքի դէմ ամերիկեան յարձակումի մը ծրագիրը եւ թէ անոնք կ'աշխատին ՄԱԿի վէճքի քննիչներուն վերադարձը ապահովել: Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա ըսաւ, որ պիտուրական որեւէ գործողութիւն, որ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի հաւանութիւնը չ'ապահովէր, ժխտական ազդեցութիւն պիտի ունենայ Միջին Արեւելքի կայունութեան վրայ:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԻՐԱՆԻ ԵՐԿՈՒ ՌԻՍԱՆՈՂՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԵԾՄԱՆԻՈՎ ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ Կ'ԸՆԵՆ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՍ ՄԸ ՀԱՅՈՒՑԻՆ ՄԱԿԻ

Իրանցի երկու ուսանողներ խաղաղութեան ու բարեկամութեան պատգամ մը հասցուցին ՄԱԿի: Երկու ուսանողները երկու տարիէ ի վեր ձեռնարկած են աշխարհին շրջանը կատարելու մարտնչի մը՝ իրենց հեծանիւներով անցնելով երկիրէ երկիր:

Հասան Ալիպատէ (31 տարեկան) ըսաւ, որ իրենց առաքելութեան նպատակն է խաղաղութեան ու բարեկամութեան պատգամը տարածել ամբողջ աշխարհին: Ալիպատէ եւ Ամիր Ահմէտի Սեպտեմբեր 2000էն ի վեր 23 հազար քմ. ճամբար կտրած են իրենց հեծանիւներով: Անոնք սկսած են Ասիայէն, ապա՝ անցած են Քանադա եւ Միացեալ Նահանգներ: Աւելի ուշ, անոնք պիտի անցնին Հարավային Ամերիկա, ապա Աֆրիկէ ու Եւրոպա: Մարտնչին վերջին կայանը պիտի ըլլայ Թեհրան:

(ՌՈՅԹԸՐԸ)

## «ԿԱՏՂԱԾ» ԲՆՈՒԹԵԱՆ ՅԵՏԵՄԱՆՔՈՎ ՓՐԱԿԱՅԻ ԸՆԵ ԲԱՂԱՔԸ ԾԱԾԿՈՒԱԾ՝ ԶՈՒՐՈՎ. ՆԻԹԱԿԱՆ ԸՍԿԱՅԱԿԱՆ ԿՆԱՍՆԵՐ ԵՒ ՄԱՐԴԱՅԻՆ ԶՈՇԵՐ



Փրակա. ամբողջ թաղամաս մը թաղուած՝ ջուրին տակ

Փրակար խմբակներ երէկ կը փորձէին ամէն գնով Չեխիոյ մայրաքաղաք Փրակայի միջին դարերէն մնացած կամուրջները եւ այլ կառուցներ պաշտպանել՝ ողողումներու ջուրերէ, որոնք ծածկած էին պատմական Հին Քաղաքը, բնակիչները եւ քրտաշրջիկները անելի բարձր վայրեր մղելով:

Բ. Աշխարհամարտէն ետք, տուներէն հեռացման մեծագոյն գործողութեան ընթացքին, Չեխիոյ տարածքին աւելի քան 200 հազար հոգի արտադրաբար հեռացած է: Ողողումները ցարդ Փրակայի հարուստող ամէնէն ծանրակշիռն են եւ «ջուրի մէջ կը ձգեն» 1890ին սրճանագրուած մրցանակը կտրող ողողումները:

Անցնող շաբթուան ընթացքին օդը քառասուն փիւսկ ստեղծած է Կեդրոնական եւ Արեւելեան Եւրոպայի մէջ, ուր տեղատարափ անձրեւներ եւ ողողումներ աւելի քան 80 կոն խլած են:

Հարիւրաւոր ուրիշներ քոն գացած են Հարավային Ասիոյ եւ Իրանի մէջ եղանակային ողողումներու:

Չեխիոյ մէջ երէկ առաւօտուն կոհերու թիւը 9ի բարձրացած էր՝ օր մը առաջ ողողումներու կապուած արկածներու ընթացքին 2 հոգիի մահէն ետք: Քանի մը ուրիշներ անհետացած կը մնան:

Փրակայի կարգ մը բնակիչները նախ դժկամութիւն յայտնած են մեկնելու գծով, սակայն երբ վթաւա գետին ջուրերը ճամբաները ողողած են, մարդիկ սկսած են խոյս տալ քաղաքի կեդրոնէն:

### ՆԱԵՒ ԱՅԼ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԵՃ

Գերմանիոյ Պաւարիոյ եւ Սաքսոնիի նահանգները նոյնպէս շատ մեծ հարուած ստացած են: Պաշտօնատարներ երէկ յայտնած են, թէ արեւելեան Գերմանիոյ Սաքսոնի նահանգի պատմութեան ամէնէն ծանրակշիռ ողողումները առնուապէս 6 կոն խլած են եւ պատմական Տրեստըն քաղաքը մինչեւ մէջք հասնող ջուրերու տակ մխրձուած է: Վտանգուած է նաեւ Աստրիոյ Սալպուրկ

քաղաքը: Երկրին տարածքին 7 հոգի մահացած է, գետերու ողողումներէ ետք, որոնք քաղաքներ եւ գիւղեր ծածկած են, անկարելի դարձնելով ճամբաներու եւ երկաթուղային երթուղիները:

Ռումանիոյ մէջ մայր մը եւ փոքրիկ երեխան կոն գացած են, երբ տուն մը փոկելու է՝ սաստիկ հովերու պատճառով, որոնք նաեւ օրոպիւս մը դարձուցած են վարորդը սպաննելով:

Ռուսիոյ Սեւ ծովու շրջանին մէջ շաբթուայի ընթացքին ողողումները առնուապէս 58 կոն խլած են:

Հիւսիսարեւելեան Իրանի մէջ ողողումներու կոհերուն թիւը երէկ 35ի բարձրացած է: Կը նախատեսուի, որ այդ թիւը աւելի եւս բարձրանայ, նկատի ունենալով, որ 6 փոխադրական եւ 2 քրտա, որոնց կարգին՝ օրոպիւս մը, ցեխին մէջ

թաղուած են եւ որեւէ տեղեկութիւն չկայ անոնց ճամբորդներուն մասին:

### ՍԿԱՆՏԻՆԱՒՈՅ ՄԵՃ՝ ԱՐԵՒ

Մինչ Կեդրոնական Եւրոպան ջուրերու տակ կը գտնուի, սկանտինաւեան երկիրներ՝ Շուէտ, Նորվեգիա, Դանիա եւ Ֆինլանտա, գրեթէ արեւադարձային շրջաններու ջերմաստիճաններ կը վայելն եւ հաւանական կը նկատուի, որ արեւը շարունակէ փայլիլ ինչ:

Երէկ, օրինակ, ջերմաստիճանը շուրջ 20էն 25 աստիճան եղած է, ընդհանրապէս արեւոտ եւ շատ փոքր համեմատութեամբ անձրեւ:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԲՈՐԵԱՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՐՈՇ ԱՐԳԻՒՆՔԻ ԿԸ ՀԱՄՆԻՆ, ՍԱԿԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

ՍԵՌԻԼ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).- Հիւսիսային եւ Հարավային Քորէա, որոնք ետօրեայ բանակցութիւններու ձեռնարկած են, Չորեքշաբթի օր համաձայնեցան տնտեսական հարցերու շուրջ բանակցութիւններ կատարելու եւ բաժնուած ընտանիքներ վերամիացնելու: Երկու Քորէաները, սակայն, չյաջողեցան համաձայնութիւն մը գոյացնել պիտուորական հարցերու բանակցութիւններ կատարելու մասին:

Միացեալ Նահանգներ եւ Ճափոն, որոնք ես կը պատրաստուին Փիոնկեանկի հետ բանակցելու, մտէն կը հետեւին Սէուլի մէջ երկու պատուիրակութիւններուն բանակցութիւններուն եւ անոնց արդիւնքին:

Հարավային Քորէայի արտաքին գործոց փոխնախարարը ըսաւ, որ Փիոնկեանկի կ'ուզէ կապերը բարելաւել Սէուլի, Թրքիոյ եւ Ուաշինկթընի հետ, կարենալ յաղթահարելու համար տնտեսական դժուարութիւնները: Ան աւելցուց, որ երկու Քորէաները համաձայնեցան կարելի եղած արագութեամբ կատարել պիտուորական բանակցութիւնները: Հիւսիսային Քորէայի կողմէ հրապարակուած յայտարարութիւնը սակայն կը յայտնէր, որ երկու երկիրները որոշեցին բանակցութիւններու առաջարկը փոխանցել պիտուորական հրամանատարութիւններուն:

### ԹՈՒՐԻՔԻ ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ԱՆԳԱՐԱ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ տնտեսութեան նախին նախարար Քեմալ Տերվիշ Չորեքշաբթի օր շարունակած է իր ճիգերը՝ իրարու հակամարտ կուսակցութիւնները միացնելու համար ընտրական ընկերակցութեան մը մէջ, մինչ ուժեղ պօրակցութիւն կ'արտայայտուէր խմբակցութեան մը հանդէպ, որ կարգ մը անձերու կողմէ խլամական սպանալիք կը նկատուի:

Շարքութեան ճիգերը ցարդ համաձայնութեան մը յանգած են միայն կեդրոնի աջ փոքրիկ կուսակցութեան մը եւ «Նոր Թուրքիա» կուսակցութեան միջեւ: Այս վերջինը հիմնուած էր արտաքին գործոց նախկին նախարար Իսմայիլ Ճեմի կողմէ, որ Տերվիշի մօտիկ կը նկատուի: Ան Չորեքշաբթի օր յայտնած է, թէ մեծ յոյս չկայ կեդրոնի յանձնար ընկերակցութեան մը կազմութեան համար՝ Նոյեմբեր 3ի ընտրութեանց պայքար մղելու նպատակով:

Անոր արտայայտութիւնները հարուած մը կը նկատուին Տերվիշի եւ Թուրքիոյ ՕԹՄԻ կ'որոակիցներուն, յատկապէս Մ. Նահանգներու, որոնք կ'ուզեն տեսնել միակ կուսակցութիւն մը, որ արեւմտեան եւ շուկայի շահերը կը ներկայացնէ:

Առանց միացեալ ձևակառուի մը, ներկայ կուսակցութիւններէն շատեր կրնան դժուարութիւն դիմագրաւել՝ քուէներու 10 տարիէրը ապահովելու եւ խորհրդարանին մէջ թոշոն ունենալու համար, ինչ որ պահպանողական Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութեան առիթ կրնայ տալ՝ քուէներու բարձր համեմատութիւններ ապահովելու:

Իսլամական այդ կուսակցութիւնը կասկածներու դուռ կը բանայ քաղաքային անձնաւորութիւններուն եւ բանակային շրջանակներու մէջ:

### ՇՂԹԱՅԱԿԱՂ ՊԱՐՂՈՒԹԻ...

Շարունակուած Ա. Էջէն կատարութիւն ունի ահաբեկչական եւ անձնապահական գործողութիւններուն ծրագրումին մէջ: Իսրայէլի Պարզութիւն կ'ամբաստանէ նաեւ «Արաբայի Նահատակներու Փաղանգներ» ղեկավարելու յանձնարքով: Յիշեալ շարժումը Ֆարսի պիտեալ ծայրայեղական թեւերէն մէկը կը նկատուի: Անիկա բազմիցս ստանձնած է պատասխանատուութիւնը անձնապահական գործողութիւններուն:

Մեկնաբաններ, սակայն, կ'ըսեն, որ Պարզութիւնը դատավարութիւնը կրնայ հակառակ պահանջներ ունենալ Իսրայէլի վրայ, որովհետեւ պաղեստինցի պաշտօնատարին փաստաբաններ պատրաստուած են վայն ներկայացնելու իբրեւ կոհը քաղաքական դրդապատճառներ ունեցող իսրայէլեան դաի մը, որուն նպատակն է վարկաբեկել Արաբաի ղեկավարած պաղեստինեան իշխանութիւնը: «Մարուան Պարզութի կը պայքարի խաղաղութեան համար», յայտարարած էր անբաստանելը, դատարան մուտք գործած պահուն: «Սաղաղութիւնը պիտի նուաճուի, երբ քունագրաւու մը կ'անարտի: Բռնագրաւման կողմէ կարելի չէ ունենալ խաղաղութիւն եւ սպանութիւն», աւելցուց ան:

Պարզութիի դէմ կարգաւորած անբաստանագիրը կը նշէր 37 յարձակումներ իսրայէլացիներուն դէմ: Ըստ անբաստանագիրին՝ Պարզութի պատասխանատուն է այդ գործողութիւններուն, որոնք 26 իսրայէլացիներու մահը պատճառած են: Անբաստանութիւններու հաստատումին պարագային, Պարզութի կրնայ ցկեանս բանտարկութեան դատապարտուիլ:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Նոյն աղբիւրներուն համաձայն, հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան-Լուի Քըրտաի ներկայացուցած է բջիջային հեռաձայնի ընկերութիւններուն հետ համաձայնագիրի մը ստորագրութիւնը նախապատրաստող բանակցութիւններուն արդիւնքները: Յիշեցնենք, որ այս համաձայնութեան հիմամբ, ընկերութիւնները բջիջայինի ցանցը պիտի բանեցնեն 1/9/2002էն մինչեւ 31/1/2003, անփոփոխ գումարի մը փոխարէն: Ժողովը իր հաւանութիւնը տուաւ համաձայնութեան սկզբունքային կէտերուն եւ նախագիծին առնչութեամբ:

Ինչ կը վերաբերի Այն Հըրուէ գաղթականին մէջ պիտեալ բախումներուն ու երկրին ընդհանուր վիճակին վրայ անոնց անդադարձներուն, ապա անոնք չբնարկուեցան, ըսին նոյն աղբիւրները:

**Shams Restaurant Anjar**

In a unique environment of natural beauty, everyone of us is here to serve you the best in Lebanese food

241244 - 27.110 - 208027 : هاتف  
 258529 P.O.BOX : 80860 BOURJ HAMMOUD : فاكس  
 1.01 : بريد الكتون

Anjar - Bekaa - Lebanon Tel/Fax: 00961 8 620567 / 03 640947-69910

**Chiraz Printing**

Հարսանկական Բարդիկերու Ընդհանուր Հարսանկեր

Հարպոյեան Կեդրոն - Դ. Համուտ  
 Հեռ. : 01-253008